

ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

Զ. — Ա. Ս Ն Պ Ա Հ Ո Ց

Նորին Թէոփիլոսի, արի եւ քաջ վարդապետի, ասացեալ Վասն Պահոց:¹

Սովորութիւն իսկ է վաճառականաց զի ի մի անգի կուտեալ ժողովեն զինչո մեծագիւս և զանազանս, զորս և պիտանացուք իցեն մարդկան², անդ վաճառեցեն: Եւ որք գիտեն զսովորութիւնն պատրաստաւթեան՝ զդինն պատրաստեն, զի յարժամ գայցէ ժամանակն վաճառելոյ³ և բթիցեն անդ և զնեցեն զոր ինչ ի պէտո լինիցի նոցաւ: Իսկ իրրե քակտի վաճառատեղն⁴ և խափանեցի վաճառն, եթէ բիւրապատիկ առաւել ևս գինս պատրաստեն, ոչ գտանիցեն ինչ անդ զի զնեցեն, և թէ տեսանիցէ զոք և հարցանիցէ⁵, ոչ այլ ինչ լոէ ի նմանէ բոյց միայն զայս որ ասէ. Ով մարդ⁶, միթէ ո՞չ գիտես զժամանակ վաճառոյն, եղաւ վաճառոն ըստ ժամանակի սովորութեան, զոր զնեցին պատրաստեալքն, և զնացին ի վաճառել⁷:

Այսպէս և աստ պարտ է իմանալ յաւուրս քառասնորդաց պահոցս⁸, որպէս զյիմար կուսանացն լոււաք, որք խնդրեցին զիւղն և ոչ զտին, և փակեցաւ նոցա դուռն առաջաստին⁹: Եւ արդ, որպէս աւրինակեցաք զկեանս զայս¹⁰, ժամանակ ոերմանելոյ, և զկեանսն զայն՝ ժամանակ հնձելոյ¹¹, նոյնպէս և զժամանակ քառասնորդաց¹² պահոցս սահմանեաց մեզ Աստուած, ժամանակ ապաշխարանաց, և զոր ինչ ի կենցաղս յայս ցրուեցուք՝ ի կեանսն յայն ժողովեմք. այսպէս զինչ ի ժամանակս տարւոջն յանցանս¹³ ժողովեալ եմք, ի ժամանակս պահոցս այս ցրուեմք՝ զզջմամբ և խոստովանութեամբ¹⁴. և թէթեացեալ թեաւք թուուցեալ վերանամք անդ, ուր պատկադիրն է, և հասուցանէ իւրաքանչիւր ումեք, ըստ զործոց իւրոց:

Եւ արդ մի՛ զժամանակս ապաշխարութեան այնպէս վարեցուք, որպէս զայս ժամանակս ամաց և ամսոց, և մի՛ համարս արկցուք¹⁵ զաւուրս պահոցս: Որպէս թէ թագաւոր ոք կապեսցէ զոք և արգելցու¹⁶ ի բանտին աւուրս չափով, պայմանս դիցէ նմա, և ապա արձակեացէ զնա¹⁷: Եւ նա մինչ ի զնդանն իցէ¹⁸ տագնապեալ նեղի, մինչև հասանիցէ ի պայմանն ազատութեան, Այլ այնպէս յօժարեցուք ի կապանս (և ի զընդան) այս պահոցս, իրրե ումեք սոսիցէ թագաւորն թէ զայս և աւր պահոցս ապաշխարութեամբ կաց և ի տառապանս, յահ և ի տաղնապ, երկիւղիւն Աստուածոյ: Եւ ես¹⁹ պարգես մեծապատիւս չնորհեցից քեզ, և նա յուսով խոստմանն համբերեցէ

- Բնագիր Դ (Էջ 573թ-580թ), Հմմ. Ե (Էջ 69ա-82ա): Զ (= Էջ 361-365), Դ (Էջ 790ա-797ա): 1 Հինգարքի մընց աղունացիցն, Երանելոյն Թէոփիլոսի ասուածարան վարդապետի ասացեալ, Գ: 2 Ի մի տեղուոչ կուտեալ ժողովին, և ինչո մեծագիւս և զանազանս, զոր և պէտո իցէ յաւս մարդկան, Գ: 3 վաճառոյն, Գ: 4 իսկ յարժամ քակեցից վաճառն, Գ: 5 Զունի՛ և թէ տեսանիցէ զոք և հարցանիցէ, Գ: 6 Զունի՛ որ ասէ. Ով մարդ, Գ: 7 Ի վայելել, Գ: 8 Զունի՛ յաւուրս քառասնորդաց պահոցս, Գ: 9 դուռն հարսանեացն, Գ: 10 Զունի՛ զայս, Դի 11 հանդերձելոյ, Գ: 12 Զունի՛ քառասնորդաց, Դի 2 13 Զունի՛ տարւոջն յանցանս, Դի 2 14 Զունի՛ զզջմամբ և խոստովանութեամբ, Գ: 15 որպէս զայլ ժամանակս տարւոյն, և մի՛ ի համարս ալքիցուք, Գ: 16 Զունի՛ և արգելցու, Գ: 17 և աւուրս չափով պայմանս դիցէ նմա և արձակեացէ զնա, Գ: 18 Զունի՛ մինչ ի զընդանն իցէ, Գ: 19 թէ ո աւր աշխատութեամբ կաց և ի տագնապումն, և ես, Գ:

և ներեսցէ տառապանացն յաւժար կամօքն։ Եւ թէ²⁰ այսպէս ընկալցուք զաւուրս²¹ աւագ²² պահոցս, և ելանելով ի սմանէ ոչ յաճախեմք ի շատակերութիւն և յարքեցութիւն, ի չնութիւն և ի պառնկութիւն, ի բարկութիւն և յերգումն, յանէծո և ի նախանձ, ի բամբասանս և յատելութիւնս, յոխակալութիւնս և յայլ ամենայն ազգի ազգի²³ ազակութիւնս, կարող է Աստուած զամենայն յանցանս, զոր ի մանկութենէ մերմէ գործեալ ևմք, թողուլ և արդարացուցանել զմեզ։

Եւ թէ մինչև ցայսուր ժամանակի, որ մի(ն)ջինքն է աւագ պահոցս²⁴, ոք գործեալ իցէ մեզո և յապաղեալ²⁵ յապաշխարելոյ, սակայն յայսմ հետէ փութով ձգնեսցի և արդարացի։ Եւ եթէ յայլ յապաղեալ՝ ի միւս այլ շարաթուն յայնմիկ²⁶ կարող եմք քաւել զամենայն յանցանս զոր գործեալ իցեմք։ Քանզի մարդասէր է Աստուած, և այնպէս ընդունի զեկեալսն²⁷ առ նա ի մետասան ժամաւն, իբրև զայնոսիկ որ իցեն առաջին ժամուն։

Եւ զայս լոելով՝ մի՛ ասիցես թէ արարից զամենայն ժամանակս զկամս մարմնոյ իմոյ, կերայց և արքից և կատարեցից զցանկութիւնս մարմնոյ իմոյ²⁸, և յաւարս ծերութեան դարձայց և ապաշխարեցից։ Քանզի յանկարծեակի գայ մահ, և հասանի ի ժամաւն²⁹, յորում ոչ գիտենաս, և ի պահու, յորում ոչ իմանաս։ Եւ այլ զի ժանչ³⁰ հաւասար հասանելոց է ծերոց և ազայոց։ Բայց թէ յամենայն տարի Ա. մարդ մետանէր, զեռ ևս պարտ էր ամենայն մարդոյ երկնչել և սարսել, վախենալ և գոզալ³¹ յանձնէ իւրմէ։ և զինչ ասացից յամենայն տարի, թէ յԱրամոյ մինչև ցայսուր Ա. մարդ մեռանելոց էր, պարտ էր ամենայն մարդոյ զմահ ի միտ ունել³².

Զոր աւրինակ թագաւոր կուտեալ զբազում ամբոխս ի մի վայր, և բողոք զուժեալ թէ մի ոմն ի ձէնչ սպանանելոց եմ, ոչ ապաքէն իւրաքանչիւր ոք յանձնէ իւրմէ գոզայր և սարսէր³³։ Եւ գարծեալ ասէր թագաւորս³⁴ ընդ ամենայն ժողովն, եթէ ոք ի ձէնչ զայս ինչ լուամարդութիւն³⁵ արացէ կամ զայն, բազում և անրաւ պարզես գտանիցէ ի թագաւորութենէս իմմէ։ Ոչ ապաքէն ամենայն մարդ փայթ եղեալ կատարելով զհրաման³⁶ թագաւորին, զի առցէ զպարգեն անցաւար, և վայելեսցէ անցաւար մարմնավել զիսսամունս մարմնոյն, որ այսաւր պայծառանայ իբրև զծաղիկ և վազիւն ոչ է, և ոչ ևս երեխ տեղի նորաւ։

Իսկ եթէ որ խոստացաւն մահկանացու է, և որ ընդունելոց էին պարզես, այնպէս ջանս զնիցէ³⁷ ատպնապաւ առ ի կատարել։ Իսկ արդ մեք զինչ պատասխանի առալց եմք, ոք իսպատացողն Աստուած է, և խոստումն առքայլութեանն երկնից անվախճանւ։ Եւ³⁸ այնքան առաւել բիւրապատիկ պայժմառալ(յ)գոյն է վայելումն կենաց, այն քան զանցաւոր կենացս այս, որչափ լոյս արեգականն քան զլոյս զիշերոյն։

Արդ եթէ ցուցանէր քեզ թագաւոր տան մի վատակութիւք և գէճ, մութն և խուար և ժահանուա, այլ և ցուցանէ զսկէզաւէ³⁹ զարպասն իւր, և զայլ ամենայն փայելումն իւրոյ արքայութեան, և ասէր քեզ թէ՝ երթ կաց⁴⁰ ի տունն յայն, զայս

20 եթէ, գ 21 զաւաւրս, գ 22 քառասնորդաց, գ 23 Զունի՛ ամենայն ազգի աղջի, գ 24 Զունի՛ որ յինչինքն է աւագ պահոցս, գ 25 Զունի՛ և յապաղեալ, գեզ

26 Ճգնեսցի, և ջանս եղեալ ճեղքեսցի և եթէ այժմ յապաղեալ որ միջոց է պահոցս, ի միւս այլ շարաթն վութացից, և մինչև ի մեծի շարաթին, զի և ի շարաթուն յայնմիկ, գ

27 զեկեալն, գ 28 և կատարեցից զկամս ցանկութեան իմոյ, գ

29 յանկարծակի հասանիցէ յահ և գայցէ ի ժամաւն, գ 30 Զունի՛ մահ, գ

31 Զունի՛ և սարսել վախենալ և գողալ, գ

32 ի միտ առնուլ, եւ ի մտի ունել, և ասել մի՞թէ ես իցեմ այն մարդ, գ

33 Զունի՛ և սարսէր, գ 34 Զունի՛ թագաւորն, գ 35 Զունի՛ լուամարդութիւն, գ

36 փութացեալ ի կատարել զհրամանս, գ 37 դիցէ, գ

38 և խոստմանըն արքայութիւնն անանց, եւ, գ

39 տուն մի վատթարագոյն, և ցուցանէր զսկէզաւէ, գ 40 կացիր, գ

չափ ժամանակս, և ապա բերից զքեզ ի բնակութիւն այսոր վայելման, և հանապազ տառ կեցցես և վայելեսցես: Այս ապաքէն զայն ժամանակն, որ ի վատթարագոյն տունն կեցար, ափոսոէ իր, հեծէ իր յոյժ, և առջնապէ իր հասանէ իր պայմանն, զոր եղեալ էր⁴¹ զի վայելէ իր զվայելումն բնութեանն այն:

Այսպէս պարտ է մեզ ամենեցուն համարել⁴² զայս կենաց բնակութիւնու: Մի այսուհետեւ հեշտացուք ի կենացաղ յայս, և զիրթհալն⁴³ ի մէնչ այսպէս աւազնոցուք, իրը թէ այլ առաւել պայծառագոյն լայս ոչ է տեսանելոց, և կամ թէ զրկեցու ի փափուկ կերակրոց, և յանոյշ ըմպելեաց⁴⁴ և ի պայծառագոյն զգեստուց, և ի քաղցր ընկերաց⁴⁵. քանզի ունիցի անդ առարտեալ⁴⁶ զամենայն առաւելապէս: Աւնիս անդ⁴⁷ պատմուճանս մեծագինս, ունիս անդ կերակուրս հոգեսրս, ունիս⁴⁸ անդ ըզփառս զերինս. զիաբրդ և կամ որպէս⁴⁹ լուր. Քս. լիցի⁵⁰ զեղ տյդ ամենայն, հանդերձ, կերակուրս և տուն, զլուխ և արժատաս⁵¹. քանզի որ ի Քրիստոս մկրտեցաք՝ զԲրիստոս զգեցայք⁵², ասէ ասաւածային առաքեալն Պօղոս: Եւ Քրիստոս ասէ. «Թէ որ ուտէ զմարմին իմ՝ նա կենդանի մնասցէ յաւիտեան. և նա յիս բնակեցէ և ես ի նման: Եւ զարձեալ թէ՝ ես նմ որթ և գուք ուռ: Արդ առացից թէ եղբայր Քրիստոսի, որպէս և ասէ Պօղոս⁵³. Եզե նա անդքանիկ ի մէջ եղբարց բազմաց: Ասացից և բարեկամս, որպէս և Քրիստոս իսկ ասէ⁵⁴. Ոչ կոչեցից զձեղ ծառայս⁵⁵, զի ծառայն ոչ գիտէ զինչ գործեսցէ տէր նորա: այլ բարեկամս, զի զամենայն զոր լուայ ի Հօրէ իմմէ, ծանուցի ձեզ:

Եւ արդ⁵⁶ առաւելապէս պարտ է պահել զրերանս մեր ժամփուր, և զլեզուս մեր յերդանէ⁵⁷ յանիծից, ի խուսաց գարշելեաց, յանարգանաց, ի բամբասանաց⁵⁸, ի հայ-հոյանաց, ի յիշընցաց⁵⁹, ի ստախաւասութենէ, ի մասնութենէ, և յայլ ամենայնէ, որ այսմ նմանիցեն, ի խեղկա(յ)տակութենէ⁶⁰, ի ծաղրածութեանց, և ի բաց վարեա ըզ-սովորութիւնն, զի մի զարձեալ անդրէն ի նոյն զարձցիս: ցածոյ զբարկութիւնն, չիջոյ զսրամաւթիւնն, հեղացոյ զայրակցութիւնն, զի մարդ ես⁶¹ և ոչ զազան. մի խուսիր բարկութեամբ և զայրանկեալ մտօք, զի մի գիւահար կոչեսցեն զքեզ:

Եւ եթէ կամիցիս զիտել եթէ զիտրդ տաելի լինիս ի ժամանակի բարկութեանն և ի զայրացմանն քս, հայեաց⁶² յայլ ոմն⁶³ բարկացեալ և զայրազնեալ, եթէ զիտրդ այլայլին աչքն, շտառգունին երեսքն, կապուտանան շրթունքն⁶⁴, թափի լեզուն, ճողին փքձիլքն⁶⁵, խուսակի ծայնն, գըրգուին սաքն, եռան և շլանան աչքն, խոզան⁶⁶ ամենայն անդամք նորա, տես զնա և տերինակէ զքեզ, տես և ստուգէ թէ չէ վատթարագոյն քան զգիւահար, և որպէս անարդ թըւի նա յաչս քս, նոյնպէս և դու յայլաց:

41 տունն յայն բնակելոց էիր, հեծէ իր և տագնապէ իր յոյժ, և փափագէ իր հասանել ի պայմանն, զոր եղեալ էր թագաւորն, գ.

42 նոյնպէս պարտիմք և մեր համարել, գ.

43 զերթալն, Դեջ. 44 Զունից և յանոյշ ըմպելեաց, Դեջ.

45 Զունից և ի քաղցր ընկերաց, Դեջ. 46 կատարեալ, գ.

47 ունի նա անդ, Դեջ.

48 ունիցիս, Դեջ. 49 Զունից և կամ որպէս, գ.

50 50 լինիցի, գ.

51 ամենայն կերակուր և ըմպելի, հանդերձ և վայելչութիւն, գ.

52 քանզի որք ի Քս. մկրտեցարուք, զՔս. զգեցեալ էք (Պաղ., գ. 27), գ.

53 Արդ ասացից թէ և եղբայր, քանզի ասէ Պօղոս, գ.

54 Զունից որպէս և Քրիստոս իսկ ասէ, գ.

55 ոչ կոչեցից զձեղ ծառայս, այլ բարեկամս, գ.

56 Զունից արդ, գ.

57 յանդանէ, ե

58 ի բանքասաց, գ.

59 Զունից ի յիշընցաց, գ.

60 և ամ. այսպիսի չարեաց, ի խեղկատակութեանց, գ.

61 հեղացոյ զզայրանալոյ բնութիւնն, հանդարտեա, և լեր խաղաղաբար. մարդ ես, գ.

62 և զայրագին սրտիւ, զի մի կոչեցիս գիւահար: Հայեաց, գ.

63 յայլումն, Դեջ. 64 Զունից կապուտանան շրթունքն, գ.

65 փըծլիքն, գ.

66 Զունից և շանան աչքն, խաղան, գ.

Եթէ ոք զքեզ զրկէ և անարգէ, հայնոյէ և թշնամանէ, արտասուեա ի վերա նորա. և աղաչեա զԱծ. ոչ համարել զայն նմա ի մեղս⁶⁷. մի՛ խռովեսցիս, այլ եր նմա ցաւոկից, մի՛ բարկանար, և մի՛ ասեր թէ զհոգի իմ վնասեաց, ոչ ոք կարէ վնասել զհոգի քո բայց⁶⁸ ի քէն. զի ա՞րդ և կամ որպէս⁶⁹. լո՛ւր և ասեմ քեց⁷⁰. անարգեստ ոք զքեզ և թշնամանեաց⁷¹, երարձ ի քէն զամենայն մեղս քո, և ոչ վնասեաց հոգւոյդ քում. իսկ դու եթէ ոխակուլ լինիս և յիշաչար՝ վնասեցեր զհոգի քո. այն բերէ վնաս անձին քում, որ բարկութիւն սրտի քո ոչ թողուս, այլ ջանաս հատուցանել նմա, և առնուլ զքէն վրէժուց նախանձոյ քո ի նմանէ: իմա՞յ, զի համար տալոց ես անդ յատեանն Քրիստոսի վասն յիշաչարութեան⁷² քո, և ոխակա լութեան քո:

Բամբասետ⁷³ զքեզ ոք և թշնամանեաց, հայնոյեաց⁷⁴ և ապտակեաց, այն ոչ է վնաս հոգւոյ քում և կամ մարմեսոյդ. իսկ եթէ դու նմա փոխարէն հատուցանես և զնա անարգեստ, դու վնասեցեր զհոգի քո: Ապա թէ ներես և համբերես նմա, և չար ոչ հատուցանես նմա, այլ աւրհնես զնա՝ նա անդ տանջի և դու պսակիս ի Քրիստոսէ. նա պատակի ի հուր գենենին, և դու փափկանսո ի փափկութեան դրախտին⁷⁵. նա ապտակեսցի ի բանակէ դիւաց, և մհծարիս դու ի գասուց հրեշտակաց. նա լինի նման սատանայի, և դու լինիս նման Աստուծոյ: Տեսն⁷⁶ և լուար զպսակ համբերութեան. մի՛ նախանձիր ընդ անարգողն և ընդ թշնամանողն, ընդ ոխապահն և ընդ յիշաչարն⁷⁷, այլ փախիր⁷⁸ ի նոցանէ և մի՛ հաւասարիր այնպիսեացն:

Արդ եթէ տեսանէիր զոք, որ շնայր և գողանայր և սպանանէր, դու ի մտի քում վարանէիր. որչափ ևս առաւել պարա է փախչել յոխակալութենէ, որ չար է քան զամենայն յանցանս: Ո՞չ դիտես եթէ զամենայն առաքինութիւնս ապտականէ ոխակալութիւնն և աղարաէ, և եթէ բիւրապատիկ մեղս գործեալ իցէ և յանցանս՝ ջնջի⁷⁹ և ապտականի ամենայն, եթէ բամբասողին և անարգաւղին⁸⁰ զքեզ թողութիւն արացես. զայն իսկ ասացի զի դիտացես թէ զհոգին հաւատացելոյն և քրիստոնէին ոչ ինչ կարէ վնասել, և ոչ նա ինքն ստանայ. քանզի անձեռնհաս արար Աստուծ զամենայն դաւաճանութիւնս բանսարկութին ի հաւատացելոցս Քրիստոսի⁸¹, և ոչ կարէ վնասել զմեղ⁸² առանց կամաց մերոց:

Այլ լինել առաջի նորա ընդուրեալ և վայելել յարքայութիւնն Աստուծոյ, և դասիւ ընդ հրեշտակս և ընդ հրեշտակապիհասն. ոչ խոտէ զկազս, ոչ զկոյրս, ոչ զաղքատս, ոչ զվատթարազգիս, ոչ զաղքատս, ոչ զվատթարազգիս, ոչ զաղքատս, և ոչ զծառայս, այլ զամենայն զայսպիհիքս, որք առնեն զկամս նորա, ընդունի և մուծանէ յարքայութիւնն իւր, և արասցէ հաւասար հրեշտակաց: Զի ոչ եթէ զայն խոդքէ ի մէնջ Աստուծ՝ որ ի ձեռս մեր ոչ լինիցին, այլ զայն իսկ պահանջէ՝ որ ի ձեռս մեր է⁸³:

Եւ արդ գիտելի է զի ծառայ լինել և աղատ, կարճ և երկայն, ծեր և աղայ, առողջ և հիւանդ, հարօւսա և աղքատ, ազէտ և ճարտար, տկար և զօրաւոր. այս ամենայն ոչ⁸⁴ ի ձեռն մեր լինիցին⁸⁵. այլ է որ յԱստուծոյ, և է ի դիմուածոց և ի

67 Զունին՝ և աղաչեա ... ի մեղս, Դեջ 68 բաց, Գ 69 Զունին՝ և կամ որպէս, Գ

70 Զունին՝ քեզ, Գ 71 Զունին՝ և թշնամանեաց, Գ

72 չարայուշ, վնասեցեր զհոգի քո: իսկ եթէ դու զրարկութիւնն ոչ թողուս, և չանաս նմա հատուցանես, անդ համար տալոց ես յիշաչարութեանն, Գ

73 Զունին՝ հայնոյեաց, Գ 74 ի վայելութիւն դրախտին, Գ

75 Զունին՝ և ընդ յիշաչարն, Գ 76 այլ փախիր և հեռացիր, Գ

77 Եւ եթէ բիւրապատիկ յանցանաւք մեղուցեալ իցես, ջնջի, Գ

78 Զունին՝ և անարգաւղին, Դեջ

79 Զունին՝ ի հաւատացելոցս Քրիստոսի, Գ 80 մեղ, Գ

81 Զունին՝ Այլ լինել ... ի ձեռս մեր է, Դեջ 82 Զունին՝ ոչ, Դեջ

83 Քանզի ծառայ լինել և աղատ, երկայն և կարճ, ծեր և ամբողջ, աղքատ և մեծա առանց է ճարտար, տկար և զօրաւոր, ոչ ի ձեռն մեր լինիցի, Գ

պատահմանց⁸⁴: Այլ հանգարա կալ, հեզ և խոնարհ, սպորմած և մարդառէք, անոխակալ և անյիշաչար, պահստկաց⁸⁵ և ազօթարար, և այլ ամենայն այսպիսիքս ի ձեռամիր կատարին, և զայն խնդրէ Աստւած ի մէնջ, զոր ի ձեռաց մերաց կատարին⁸⁶, քանզի ձեռամբ մարմեռյ կատարի մարա պատերազմի: Եւ այս ամենայն ուղղութիւնո զոր գրեցաւ, պատերազմ է ընդ սատանայի⁸⁷:

Եւ այլ ունիմ բանս ասելոյ, եթէ մտադրութեամբ լոէք, եթէ սազմոսք և աւելուք, ուր և կատարին, եթէ ի տան և թէ ի զուսր, թէ ի փաղացի և թէ ի ճանապարհի, թէ յաշխատանս վաստակոց և թէ յարաւհատագործութիւնս, անդ բանակք հրեշտակաց ժողովին, և որպէս սազմասերգութիւնն սովորէ, զի ուր և կատարի, անդ խօսակից զրանակս հրեշտակաց ժողովեացէ⁸⁸: Այնպէս և ընդվայր խեղկառ(j)ատակաւթիւն և ծաղրածութեամբ բանք, ուր և կատարին, եթէ ի մէջ եկեղեցւոյ և թէ ի մէջ հրապարակի, թէ ի մէջ քանանայից, և թէ ի մէջ կրօնաւորաց, անդ և բանակք դիւացն կաքաւեն, զի ոչ եթէ անդին սորէ զմարդն և հարկաւորէ, և կամ պղծէ և ապականէ, այլ բարք մոլորութեանն և առաքինութեան⁸⁹:

Եւ արդ զինչ աւգացաւ Յուղայ շրջելովն ընդ Քրիստոսի, և կոմ զինչ վեաս սեցաւ Յովսէփու⁹⁰ բնակելով ի մէջ լկտի Եղիպատացւոցն: Ասիմ զբարելոն և զերիս մանկունան և զԴանիէլ, որ մինն խցեաց զրերանս և առեծուցն⁹¹, իսկ Գ մանկունքն զիթ կանգուն բոցն շիջուցին, նշանակէր և առեծքն՝ զի ուր և շարաթուցս, և իթ կանգուն բոցն՝ զքառասուն և զինն տուուրքս պահոցս յիսնակացն նշանակէր: Եւ ի ձեռն այս և շարաթուցս և իթ առուրցո քաջացան⁹² առաքինիքն, զի ոչ եթէ առեծքն այլափիխեցան⁹³ ի կերպարանս ոչխարաց, այլ կացին մնացին առեծք, և ազօթիւք սրբայն կապեցան բերանք նոցա, և ոչ եթէ հուրն փոխեցաւ ի բնութիւն ցողոյ և ամպոյ⁹⁴, այլ բոցն բարձրացաւ իթ կանգուն, և ցոլէր անձրէ⁹⁵ երից մանկանցն ի բոցոյն⁹⁶ և զովացուցանէր զնոսա:

Արդ փութասցուք և մեք, ով սիրելիք, զի այնպէս կատարեացուք⁹⁷ զաւուրս քառասնորդաց պահոցս, զոր⁹⁸ միջնցոք այսօր իրրե զծով, երեք մանկունքն ի մէջ հնացին շիջուցին զզօրութիւն հրոյն, փութասցուք և մեք այնպէս ի մէջ պահոցս ցածուցանել⁹⁹ զցանկութիւն մեղաց: Դանիէլ ի գուրն առեծուցն կապեաց զգապանութիւն նոցա, ջանասցուք և մեք, զի ի մէջ պահոցս ցածուցանեմք զգապանուցեալ բարկութիւնն¹⁰⁰ ընդդէմ ընկերին, որ առաւել խա(j)ծանէ և վիրաւորէ զհոգիս մեր և զընկերին¹⁰¹:

84 Զունի՝ այլ է ... ի պատահմանց, գ 85 Զունի՝ և անյիշաչար, պահստկաց, գ

86 Զունի՝ զոր ... կատարին, գ 87 Զունի՝ եւ այս ընդ սատանայի, գ

88 Եւ այլ ունիմ բանս ասելոյ, եթէ մտադրիրութեամբ լոիցէք քանզի ուր սազմոս կատարի, եթէ ի տան, և թէ ի փաղացի, եթէ ի ճանապարհի, և թէ ի բանատեղի, և թէ յարւեստագործութիւնս, անդ բանակք հրեշտակաց. և որպէս սազմասերգութիւնն սովորէ, զի ուր և կատարի, անդ խաւսակից զրանակս հրեշտակաց ունի, և անդ ժողովին զասք երկնային զաւրացն, գ

89 Այնպէս և ընդվայր խեղկատանցն և ծաղրածութեան, ուր և կատարի, եթէ ի մէջ եկեղեցւոյ և թէ ի մէջ քանանայից, և թէ ի վանս ի մէջ կրաւնաւորաց, անդ և բանակք դիւաց, զի ոչ եթէ տեղին սրբէ զմարդն, և կամ պղծէ, այլ բարք առաքինութեանն, գ

90 Յովսէփի, գ:

91 Խցեալ, զբերանս և առիւծուցն, որ իրր զմիսեալ պողովատ, կարծր թուէր ժանեաց դազանացն, գ 92 ջանացան, Դեզ 93 այլափոխվեցան, և 94 ցոլոյ և, գ

95 Զունին՝ անձրէ, Դեզ 96 Զունի՝ ի բոցոյն, գ 97 Զունին՝ կատարեացուք, Դեզ

98 զի, Դեզ 99 շիջուցանել, գ

100 ցածուցանել բարկութիւնն, Զէ զգապանութիւն փրկութեանն ցածուցանել, գ

101 Վասն որոյ հայցեմք ի մարդառէր փրկէն մերմէ Յիսուսէ Քրիստոսէ փրկել զմեզ ի ժանեաց սատանայի և յամենայն չար գործոց նորա, Դեզ

Դանիել, այր ցանկութիւն¹⁰², որ զերից էնեակոն հաց ոչ եկեր, և ջուր ոչ արք, և զառիւծոն պահել ուսույց մտանելով ի գուրքն, զի որպէս ի քարէ, կամ ի պըղընծոյ կամ յայլ իմեքէ ի կարծր նիւթոյ, հաստատեալ արկանել ոչ ունէին առիւծքն զատամաւնոն, որպէս զմուխ երկութոյ, այնպէս զմարմին առնն պահքն պնդեցին անվանելի առնելով առեծուցն. քանզի ոչ բանային հակառակ սրբոյն զրերանս իւրեանց. Այսպէս և դուք եղբարք ջանացարսւք ի մէջ պահոց պինդ պահել ոչ միայն ի կերակրոց, այլ և զմիաս ի չար խորհրդոց, զաշս յայրատ հայելոյ, զակոնչս ի չար լսելոյ, զրերանս ի մէշում խաւսելոյ, ի բամբասելոյ և ի արանջալոյ, զձեռո ի զրկելոյ, ի զողանալոյ, և անիրաւութեամբ զանտագսն հարկանելոյ, զստ մեր պահեցուք ի զարտաւզի զնալոյ և յանուզզոյս ընթանալոյ, զնոսոտելիս մեր պահեցուք ի մեզաց հոտոյ, զի որպէս ի մէջքն է անձին զուրութիւն մարդոյն, այսպէս և զուրութիւն պահոց ի միջին առւրս հաստատի, զի զզաւրութիւն Բ ծայրիցն մէջն առ իւր ունի պնդեալ:

Պահքն ողջախոնհութեանց մայր, պահքն մանկոնց դաստիարակ, պահքն ծերոց զարդ, պահքն բարի ճանապարհորդակից ուղեգնացից, պահքն ամսւր խորանակից որք ի առնու են, պահողին զարկեցազոյն երեսք, ոչ չառագունեալ անամաւթ ծաղկով այլ գեղնութեամբ, ողջախոնի կերպիւ կազմեալ. պահողին տէն ցած, զնացքն ամփափեալ, ծազրն պարկեցանեալ, որ ոչ անարդի և ոչ թշնամանի, պահողին չափաւորութիւն բանի, մտքրութիւն սրտի, պահքն զէն են ընդդէմ դիւացն զնդի. քան զի այս ազգ ոչ իւրիք ելանէ եթէ ոչ պահաւք և ազաւթիւք: Եւ պահոց բարիք այսքան և առաւել քան զսոյն. ով եղբարք, ջանացարսւք ի պնդութիւն պահոց, զոր միջեցաք այսաւր, հասուցանել յաւարա սուրբ քառասնորդացս, և մի հեշտացուք ի սէր մարմնոյս, և ի զրազանս սուտ կենցաղոյս, զի խարաւզ է և կորուսա զործէ հագոց:

Երկերսւք ի մահաւանէ՝ զի դառն է, երկերսւք ի հրայն՝ զի անանց է, երկերսւք ի սառնամանեաց, զի ոչ ունի չերմութիւն, զարհուրեցայք ի յորդանցն, զի անքուն են, զգուշացարսւք ի տարտարսսացն, զի անդադար են, երկերսւք ի խուարէն, զի աննչոյլ է, սարօնցէք ի լալ աչացն, զի սասարիկ է, սասանեցայք ի կրծել ատամանցն, զի անագին է, երկերսւք ի դատաւորէն, զի անաշառ է, երկերսւք ի դատաստանէն, զի անաւոր է, երկերսւք ի թագաւորէն՝ զի անկաշառ է, երկերսւք ի հրեշտակացն՝ զի անողորմք են:

Սիրելիք, աստ սերմանեացուք զողորմութիւն, զի անդ հնձեսցուք զբարութիւն, աստէն ասցուք յաղքատսն և անդէն ացուք յԱստուծոյ:

(Եար. 12)

Հրատ. Ա. Յ. Մըձնինի

102 Զանին. Դանիել, այր ցանկալին, զվերջ, Դեջ

